947

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ՎՈՂ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ԳՈՏՈՒ

## ՄԱՐԶԵՐՈՒՄ, ԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

## ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ԵՎ ՀԱՄԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

338.1
Խ-11

ԳՅՈՒՂՀՐԱՏ — ԵՐԵՎԱՆ 1936

338.1
Խ-11
Կ1
07 FEB 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ՎՈՉ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ԳՈՏՈՒ

## ՄԱՐԶԵՐՈՒՄ, ՅԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒՄ

## ՅԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՄԱՍԻՆ

(ԽՍՀՄ Ժողկոմխորհի յեվ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումը)

---

ԳՅՈՒՂՀՐԱՏ ● 1936 ● ՅԵՐԵՎԱՆ

29809

11.09.2013

2084
38

# ԽՍՀՄ ՎՈՋ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Այս տարվա դեկտեմբերի 5-ից մինչև 8-ը Համ Կ(բ)Կ կենտկոմի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի կողմից հրավիրված խորհրդակցություն՝ նվիրված Մոսկվայի, Լենինգրադի, Կալինինի մարզերում, Բելոռուսիայի ԽՍՀ-ում, Գորկու յերկրամասում, Արևմտյան մարզում, Հյուսիսային ու Կիրովի յերկրամասերում, Իվանովո-արդյունաբերական մարզում, Կույբիշևի յերկրամասի աջափում և Կուրսկի մարզի հյուսիսային շրջաններում կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման և գյուղատնտեսական արտադրության գործը բարելավելու հարցերին։

Խորհրդակցությանը մասնակցում եյին վերոհիշյալ մարզկոմների, յերկրկոմների ու Բելոռուսիայի Կ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղարները, մարզային ու յերկրային գործկոմների նախագահները և Բելոռուսիայի Ժողկոմխորհի նախագահը, մարզկոմների, յերկրկոմների և Բելոռուսիայի Կ(բ)Կ կենտկոմի գյուղատնտեսական բաժինների վարիչները, մարզային ու յերկրային հողային վարչությունների պետերը և Բելոռուսիայի Հողժողկոմը, ինչպես նաև մեքենա-տրակտորային կայանների, խորհտնտեսությունների, խորհտնտեսային տրեստների ու բանմատակարարման բաժինների 63 դիրեկտորներ։

Խորհրդակցության աշխատանքներին մասնակցեցին ընկերներ Ստալինը, Մոլոտովը, Կագանովիչը, Անդրեյեվը,

Հրատարակության համար պատրաստեց՝ Ար. Մարուխյան
Տեխ. խմբ.՝ Հ. Մուրադյան
Լեզվ. խմբ.՝ Արբ. Գրիգորյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան

Գլավլիտի լիազոր Ս—463, հրատ № 293, պատվեր № 29, տիրաժ 2000
1 1/4 տպագրական թերթ, 1 թերթում 29184 տպ. նշ.
Հանձնված է արտադրության 1936 թ. հունվարի 31-ին
[illegible] 1936 թ. հունվարի 26-ին

Ժդանովը, Զուբարը, Միկոյանը, Յակովլեվը, Չեռնովը յեվ Կալմանովիչը:

Խորհրդակցությանը լսեց մարզկոմների, յերկրկոմների ու Բելոռուսիայի Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարների և մարզային ու յերկրային գործկոմների նախագահների՝ ընկերներ Նիկոլայեվի, Ագեյեվի (Իվանովյան մարզ) Պրիմեկի (Գորկու յերկրամաս), Ստոլյարի (Կիրովի յերկրամաս), Վ. Իվանովի (Հյուսիսային յերկրամաս), Ռումյանցեվի (Արևմտյան մարզ), Գիկալոյի (Բելոռուսիա), Ստրուպպեյի (Լենինգրադի մարզ), Խրուշչեվի (Մոսկվայի մարզ), Ի. Իվանովի (Կուրսկի մարզ), Զուբրիկովի (Կույբիշեվի յերկրամաս) և Միխայլովի (Կալինինի մարզ) զեկուցումները՝ յուրաքանչյուր մարզում, յերկրամասում և Բելոռուսիայի ԽՍՀ-ում կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման և գյուղատնտեսական արտադրության գործի բարելավման հարցերի մասին և Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի Գյուղատնտեսական բաժնի աշխատողների հարակից զեկուցումները, վորոնք ստուգել եյին տեղական կուսակցական ու խորհրդային մարմինների աշխատանքը՝ կոլտնտեսությունների ամրացման և գյուղատնտեսության ղեկավարման բնագավառում:

Խորհրդակցությունը գործնական ձեռնարկումներ մշակեց վոչ սևահողային գոտում կոլտնտեսությունների ղեկավարությունը բարելավելու և գյուղատնտեսության հետագա վերելքի ուղղությամբ, գլխավոր ուշադրությունը նվիրելով բերքատվությունը բարձրացնելու գործին, առանձնապես ցանքաշրջանառությունը կիրառելուն, տեղական պարարտանյութերի ոգտագործմանը և առվույտի ցանքերի զարգացմանը, գյուղատնտեսական արտադրության մեքենայացմանն ու նոր ՄՏԿայանների շինարարությանը, տրակտորների ու գյուղատնտեսական մեքենաների լավագույն ոգտագործմանը, կադրերի պատրաստմանն ու կանանց կոլտնտեսություններում ղեկավար աշխատանքի ու բարդ մեքենաների կառավարման աշխատանքում առաջ քաշելուն, անձրևային յեղանակի պայմաններում բերքի կորուստը կանխելու համար անհրաժեշտ միջոցառումներին և առանձնապես այն միջոցառումներին, վորոնք ապահովում են հարվածային կոլտնտեսականների համամիութենական յերկրորդ համագումարի կողմից ընդունված կոլտնտեսային կյանքի ստալինյան կանոնադրության անշեղ ու ճշգրիտ կենսագործումը:

Ստորև տպագրվում ե այդ խորհրդակցության աշխատանքների հիման վրա ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի ընդունած վորոշումը «Վոչ սևահողային գոտու մարզերում, յերկրամասերում և հանրապետություններում կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման և գյուղատնտեսության վերելքի մասին»:

(«Պրավդա» 20-ը դեկտեմբերի, 1935 թ.)

## ՎՈՉ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՄԱՐԶԵՐՈՒՄ, ՅԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒՄ ՅԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՄԱՍԻՆ

# ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմն արձանագրում են, վոր վոչ սևահողային գոտու շրջանները— Մոսկվայի, Լենինգրադի, Կալինինի մարզերը, Բելոռուսիայի ԽՍՀ, Գորկու յերկրամասը, Արևմտյան մարզը, Հյուսիսային ու Կիրովի յերկրամասերը, Իվանովո-արդյունաբերական մարզը,—վերջին տարիների ընթացքում մի շարք հաջողություններ են ձեռք բերել գյուղատնտեսության վերելքի գործում—հաջողությամբ արմատանում են աշնանացան ու գարնանացան ցորենի ցանքերը, վորի տարածությունը 1928 թվականի 335 հազար հեկտարից աճել ե՝ 1935 թվականին հասնելով 2 միլիոն հեկտարի, աճել ե կարտոֆիլի, բանջարեղենի ու վուշի արտադրանքը և վաճառքը պետությանը, բավարար կատարվում ե անասնաբուծության զարգացման պետական պլանը։ Այնպիսի մարզեր, ինչպես Մոսկվայի, Լենինգրադի մարզերը, Գորկու յերկրամասը, Կալինինի և այլ մարզերը ծածկում են հացի ու բանջարեղենի իրենց պահանջի զգալի մասը և համարյա լիովին—կարտոֆիլինը՝ իրենց ռեսուրսների հաշվին։



Դրա հետ միասին, ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը և Համ. Կ(բ)Կ Կենտկոմն անբավարար են համարում ինչպես վերևում թվարկված մարզերում ու յերկրամասերում, այնպես և Կույբիշևի յերկրամասի աջ ափում ու Կուրսկի մարզի հյուսիսային մասում գյուղատնտեսության վերելքի և կոլտնտեսությունների ամրապնդման ասպարեզում ձեռք բերված նվաճումները։

ա) Չնայած կլիմայական բարենպաստ պայմաններին, հացահատիկային կուլտուրաների, կարտոֆիլի, բանջարեղենի և առանձնապես վուշի ու կանեփի բերքը մասնանշված շրջաններում շարունակում ե մնալ ծայրահեղորեն ցածր մակարդակի վրա և անկայուն—հացահատիկային կուլտուրաներինը՝ 7—9 ցենտներ և միայն առանձին մարզերում և յերկրամասերում մինչև 11 ցենտներ հեկտարից, կարտոֆիլինը՝ 80—90 ցենտներ հեկտարից, վուշինը և կանեփինը՝ 2—3 ցենտներ, նրբաթելի վերածած։ Այդպիսի միջին բերք գոյություն ունի այն ժամանակ, յերբ կան այնպիսի առաջավոր կոլտնտեսություններ, վորոնք ստանում են հեկտարից 30 ցենտներ և ավելի հացահատիկ, հեկտարից 5 ցենտներ և ավելի վուշ՝ նրբաթելի վերածած, հեկտարից 200 ցենտներ և ավելի կարտոֆիլ։ Վատ վիճակում ե գտնվում ցանքաշրջանառությունն արմատացնելու և այն առանձնապես պահպանելու գործը։

բ) Վոչ սևահողային գոտու ՄՏԿայաններին ուղարկված գյուղատնտեսական բարդ մեքենաները, վորպես կանոն, ոգտագործվում են ծայրահեղորեն անբավարար. տրակտորների արտադրողականությունը ցածր ե, բարդ կալսիչներն աշխատում են վոչ լրիվ բեռնվածությամբ, առանձնապես անբավարար ե ոգտագործվում լայնարբերան, վուշ գզող մեքենան, վորը 1935 թվականին տվել ե կառավարության կողմից սահմանված արտադրողականության նվազագույն նորմայի միայն մեկ հինգերորդական մասը, մինչդեռ առաջավոր վուշ գզողները՝ սեզոնի ընթաց-

քում՝ յուրաքանչյուր մեքենայով ավել են 60—100 հեկտար։ Այդ տեղի յե ունենում գլխավորապես այն պատճառով, վոր սատնանշված շրջանների յերկրային ու մարզային կազմակերպությունները կադրեր չեն ընտրել ու պատրաստել՝ գյուղատնտեսական բարդ մեքենաները յուրացնելու համար։

գ) Ջրերի պահպանման ու վերարտադրության (զարգացման) նկատմամբ անբավարար ուշադրություն ունենալու հետևանքով, բանող ձիերի թիվը այդ յերկրամասերում ու մարզերում դեռ շարունակում ե նվազել, և ձիերի զգալի մասն էլ անբավարար վիճակումն ե գտնվում։ Միանգամայն անբավարար տեմպով ե զարգանում խոշորածությունը և վոչխարաբուծությունը ինչպես կոլտնտեսություններում, այնպես և կոլտնտեսականների անհատություններում։

Ծայրահեղորեն անբավարար վիճակումն են գտնվում առվույտի ցանքերը, վորոնց ընդարձակումը հացահատիկային կուլտուրաների և առանձնապես վուշի բերքատվությունը բարձրացնելու և անասունների կերի ռեսուրսներն ավելացնելու կարևորագույն պայմաններից մեկն ե հանդիսանում։ Առվույտի սերմնարաններ թողնելու և սերմացու հավաքելու և մթերելու պլանները չեն կատարվում։

Շատ դեպքերում վատ ե դրված լինում մարգագետիններն ու արոտատեղերը բարելավելու և դրանց կուլտուրական տեսքի բերելու աշխատանքը, մի բան, վորը կարող ե և պետք ե լավ կերի հսկայական ռեսուրսներ տա անասունների համար։

դ) Յերկրային, մարզային և շրջանային կուսակցական կազմակերպությունները մի շարք դեպքերում հաշվի չեն առել ընկ. Ստալինի այն ցուցումը, թե «անցումը կոլեկտիվ տնտեսության, վորպես գերակշռող ձևի, վոչ թե նվազեցնում, այլ մեծացնում ե մեր հոգատարությունը գյուղատնտեսության նկատմամբ, վոչ թե նվազեցնում,



այլ ավելի յե մեծացնում կոմունիստների ղեկավար դերը գյուղատնտեսության վերելքի գործում»։ Չնայած վոր վերջին տարվա ընթացքում հազարավոր նոր կոլտնտեսություններ են կազմակերպվել այդ շրջաններում և կոլտնտեսություններ են մտել մեկ միլիոնից ավելի մենատնտեսներ, այնուամենայնիվ կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների դաստիարակման և կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման աշխատանքը դեռ չի կանգնել շատ շրջանային կուսակցական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում։

ե) Ստալինյան կոլտնտեսային կանոնադրությունը սիստեմատիկաբար խախտվում ե։ Հանցավոր կերպով խախտվում ե ղեկավար կոլտնտեսային աշխատողների (կոլտնտեսությունների նախագահների ու բրիգադիրների) ընտրության ու փոխարինման կանոնադրությամբ սահմանված կարգը։ Կոլտնտեսությունների նախագահները հաճախ հանվում են աշխատանքից՝ առանց բավարար հիմքի, փոխադրվում են կոլտնտեսությունից-կոլտնտեսություն, դատի յեն տրվում և տուգանվում անօրինական կերպով, միանգամայն դատարկ բանի հիման վրա, յերբ միանգամայն բավարար կարելի յեր համարել հասարակական ներգործությունը կամ համապատասխան կուսակցական ու խորհրդային որգանի ցուցումը։ Դրանով իսկ կուսակցական և խորհրդային կազմակերպությունները փոխանակ կոլտնտեսային ղեկավար կադրեր դաստիարակելու և ամրացնելու, ցիրուցան են անում այդ կադրերը և կայուն ղեկավար կազմ չեն ստեղծում կոլտնտեսություններում, առանց վորի չի կարելի առաջ մղել կոլտնտեսությունների ամրապնդման գործը։

Շատ դեպքերում խախտվում են կոլտնտեսությունից վտարելու վերաբերյալ կանոնադրությամբ սահմանված կանոնները. օրինակ՝ կոլտնտեսականներին վտարում են կարգապահության այնպիսի խախտումների համար, վորոնք,

կանոնադրության համաձայն, պատժվում են տուգանքով կամ թե հասարակական ներգործման միջոցներով, վտարում են արտագնացների կամ այն անձանց ընտանիքի անդամներին, ովքեր բոլորովին գնացել են արտադրության մեջ աշխատելու, մինչդեռ այդպիսի արտագնացությունը միանգամայն նորմալ յերևույթ է վոչ սևահողային գոտու պայմաններում, և վոչ մի դեպքում չի կարող հետապնդվել տեղական մարմինների կողմից. վտարումը կոլտնտեսություններից շարունակվում է կատարվել կուսակցության ու խորհրդային մարմինների, ՄՏկայանների դիրեկտորների կողմից, վորոնք լիազորված չեն այդ բանի համար, վտարումները կատարվում են կոլտնտեսության վարչության կողմից, առանց կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշման։

Վոչ սևահողային գոտում, ինչպես նաև Կույբիշևի յերկրամասի աջ ափում ու Կուրսկի մարզի հյուսիսային շրջաններում գյուղատնտեսության վերելքի հետագա արագացումն ու կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդումն ապահովելու նպատակով, ԽՍՀ Միության Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վորոշում են.

1. Պարտավորեցնել վոչ սևահողային գոտու կուսակցական և խորհրդային կազմակերպություններին՝ մոտակա 3—4 տարվա ընթացքում ապահովել բերքատվության բարձրացումը—հացահատիկային կուլտուրաներինը՝ հեկտարից, միջին հաշվով, 90—100 փութ, վուշինը՝ հեկտարից, միջին հաշվով, 4—5 ցենտներ, նրբաթելի վերածած, և կանեփինը՝ հեկտարից 5—6 ցենտներ, նրբաթելի վերածած, կարտոֆիլինը՝ հեկտարից, միջին հաշվով, 900—1.100 փութ։ Հանձնարարել յերկրկոմներին ու մարզկոմներին՝ այս ձըմռան ընթացքում աշխատանքի ներգրավելով արդեն այժմ ռեկորդային բերք ստացող առաջավոր կոլտնտեսություններին, անհրաժեշտ գործնական ձեռնարկումներ մշակել բերքատվությունը բարձրացնելու վերաբերյալ՝ յուրաքան-



չյուր շրջանին ու կոլտնտեսությանը համապատասխան, հատուկ ուշադրություն դարձնելով տեղական պարարտանյութերի (գոմաղբ, մոխիր, տորֆ, կիր և այլն) արմատացման ու լրիվ օգտագործման վրա։

Պարտավորեցնել մարզկոմներին, յերկրկոմներին, Բելոռուսիայի Կ(բ)Կ Կենտկոմին, մարզային ու յերկրային գործկոմներին, Բելոռ. ԽՍՀ Ժողկոմխորհին և ԽՍՀՄ-ի Հողժողկոմատին՝ ապահովել 1935 թվականի բերքից առվույտի սերմացու մթերելու պլանի անպայման կատարումը, և 1936 թ. յուրաքանչյուր մարզում (յերկրամասում, հանրապետությունում) հիմնել առվույտի սերմնաբուծարաններ այնպիսի տարածության վրա, վորն ապահովի առվույտի սերմի արտադրությունը պետական պլանի չափով, վորի նախագիծը Հողժողկոմատը մեկ ամսվա ընթացքում պետք է ներկայացնի կառավարության հաստատմանը։

2. Վոչ սևահողային գոտու վերոյիշյալ մարզերին և յերկրամասերին հետևյալ օգնությունը ցույց տալ՝ նոր ՄՏկայաններ կազմակերպելով ու տրակտորային մեքենաներ տրամադրելով.

### ա) Նոր ՄՏկայանների կազմակերպումը

| | | | |
|---|---|---|---|
| Հյուսիսային յերկրամաս . | 22 | այդ թվում մինչև գարուն . . | 14 |
| Կարելիայի ԻԽՍՀ . . . . | 10 | » » » » | 8 |
| Լենինգրադի մարզ . . . . | 25 | » » » » | 16 |
| Արևմտյան մարզ . . . . | 25 | » » » » | 16 |
| Կալինինի մարզ . . . . | 25 | » » » » | 16 |
| Մոսկվայի մարզ . . . . | 25 | » » » » | 16 |
| Իվանովյան » . . . . | 15 | » » » » | 10 |
| Գորկու յերկրամաս . . . . | 23 | » » » » | 16 |
| Կիրովի » . . . . | 25 | » » » » | 16 |
| Բելոռուսիայի ԽՍՀ . . . . | 23 | » » » » | 15 |
| Կույբիշևի յերկրամ. աջ ափ | 33 | » » » » | 22 |
| Կուրսկի մարզի հյուսիս. շրջ. | 15 | » » » » | 10 |
| Ընդամենը | 266, | այդ թվում մինչև գարուն | 175 |

## բ) Տրակտորների մատակարարում

| | СТЗ և ХТЗ | ЧТЗ | Ունիվերսալ |
|---|---|---|---|
| Հյուսիսային երկրամաս | 900 | 125 | 25 |
| Կարելիայի ԻՍՍՀ | 80 | 60 | — |
| Լենինգրադի մարզ | 1450 | 300 | 300 |
| Արևմտյան » | 1850 | 220 | 130 |
| Մոսկվայի » | 2800 | 390 | 450 |
| Կալինինի » | 1700 | 300 | 50 |
| Իվանովյան » | 1650 | 200 | 75 |
| Գորկու երկրամաս | 1800 | 250 | 50 |
| Կիրովի » | 2000 | 350 | 50 |
| Բելոռուսիայի ՍՍՀ | 1600 | 300 | 100 |
| Կուրսկի մարզի հյուսիսային շրջաններ | 750 | 250 | 100 |
| Կույբիշևի երկրամասի աջ ափ | 1500 | 400 | 100 |
| Ընդամենը | 18080 | 3145 | 1430 |

## գ) Մեքենաների մատակարարում

| | Տրակտորային գութաններ | Տրակտորային [illegible] | Կալսիչներ: Мк 1100 | Կալսիչներ: БДО 34 | Կոմբայններ: Ընդամենը | Կոմբայններ: Այդ թվում [illegible] | Վուշ քաշող մեքենաներ | Կարտոֆիլ հավաքող մեքենաներ: [illegible] | Կարտոֆիլ հավաքող մեքենաներ: Տնկող | Հնձող-կապող [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հյուսիսային երկրամաս | 1200 | 200 | 50 | 200 | 60 | 50 | 100 | 50 | — | 1500 |
| Կարելիայի ԻՍՍՀ | 200 | 10 | — | 20 | — | | — | — | — | 150 |
| Լենինգրադի մարզ | 1910 | 700 | 200 | 250 | 325 | 300 | 200 | 330 | 150 | 3000 |
| Արևմտյան » | 2000 | 700 | 300 | 300 | 150 | 100 | 500 | 300 | 130 | 3000 |
| Մոսկվայի » | 3100 | 1500 | 500 | 200 | 600 | 50 | 140 | 700 | 250 | 3000 |
| Կալինինի » | 2130 | 600 | 300 | 300 | 100 | 70 | 640 | 200 | 40 | 2500 |
| Իվանովյան » | 1900 | 500 | 250 | 200 | 150 | 100 | 500 | 200 | 150 | 2500 |
| Գորկու երկրամաս | 2120 | 700 | 250 | 200 | 250 | 50 | 150 | 300 | 100 | 3000 |
| Կիրովի » | 2600 | 900 | 400 | 200 | 400 | 50 | 400 | 100 | 50 | 3500 |
| Բելոռուս. ՍՍՀ | 2100 | 700 | 350 | 200 | 200 | 150 | 500 | 400 | 200 | 3000 |
| Կուրսկի մարզի հյուս. շրջաններ | 1200 | 500 | 300 | — | 400 | — | — | 50 | 50 | 1000 |
| Կույբիշևի երկրամասի աջ ափ | 220 | 990 | 300 | 100 | 550 | 30 | 40 | 100 | 50 | 2000 |
| Ընդամենը | 22660 | 8000 | 3200 | 2170 | 3185 | 950 | 3170 | 2730 | 1170 | 28150 |



## դ) Մելիորատիվ ինվենտարի մատակարարում

| | Գութաններ: Թփուտային | Գութաններ: Ճահճային | Թփահատ մեքենաներ | Առուներ փորող գործիքներ | Արմատահանման մեքենաներ (տրակտորային) |
|---|---|---|---|---|---|
| Հյուսիսային երկրամաս | 70 | 25 | 35 | 50 | 130 |
| Կարելիայի ԻՍՍՀ | 20 | 10 | 5 | 10 | 30 |
| Լենինգրադի մարզ | 170 | 40 | 40 | 50 | 200 |
| Արևմտյան » | 200 | 15 | 35 | 50 | 90 |
| Կալինինի » | 100 | 50 | 35 | 55 | 220 |
| Մոսկվայի » | 200 | 15 | 30 | 40 | 180 |
| Իվանովյան » | 340 | 50 | 40 | 60 | 280 |
| Գորկու երկրամաս | 150 | 30 | 20 | 20 | 150 |
| Կիրովի երկրամաս | 250 | 50 | 45 | 25 | 220 |
| Բելոռուսիայի ՍՍՀ | 250 | 50 | 45 | 40 | 160 |
| Կույբիշևի երկրամասի աջ ափ | 20 | 30 | 20 | — | 40 |
| Ընդամենը | 1770 | 365 | 350 | 400 | 1700 |

## ե) Մարդատար մեքենաների մատակարարումը շրջհողբաժիններին

Հյուսիսային երկրամաս . 25
Կարելիայի ԻՍՍՀ . . . 10
Լենինգրադի մարզ . . . 40
Արևմտյան » . . . 40
Մոսկվայի » . . . 55
Կալինինի » . . . 40
Իվանովյան » . . . 35
Գորկու երկրամաս . . 45
Կիրովի » . . 40
Բելոռուսիայի ՍՍՀ . . 45
Կուրսկի մարզի հյուսիսային շրջաններ 20
Կույբիշևի երկրամասի աջ ափ 30

3. Սահմանել հետեվյալ առաջադրանքները յուրաքանչյուր 15 ուժանոց տրակտորի յեվ վուշ գզող լայնաքերան մեքենաների ու բարդ կալսիչների համար՝ հեկտարներով.

| | Տրակտորի աշխատանքը, առանց կալսման ու տրանսպորտային աշխատանքների | Գծել լայնաքերան վուշ գզող մեքենայով՝ հազար հեկտարներով | Ընդամենը կալսել բարդ կալսիչներով՝ հազար հեկտարներով |
|---|---|---|---|
| Հյուսիսային յերկրամաս | 300 | 13 | 164 |
| Կարելիայի ԻՍՍՀ | 150 | — | 20 |
| Լենինգրադի մարզ | 300 | 30 | 330 |
| Արևմտյան » | 400 | 45 | 450 |
| Մոսկվայի » | 420 | 10 | 780 |
| Կալինինի » | 350 | 63 | 340 |
| Իվանովյան » | 350 | 43 | 300 |
| Գորկու յերկրամաս | 480 | 12 | 425 |
| Կիրովի » | 450 | 39 | 430 |
| Բելոռուսիայի ՍՍՀ | 380 | 36 | 650 |

4. Պարտավորեցնել վոչ սեվահողային գոտու կուսակցական յեվ խորհրդային կազմակերպություններին՝ 1936 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար՝ պատրաստել, տրակտորային մեքենաների վրա աշխատող վորակյալ կադրեր՝ հետեվյալ քանակությամբ.

| | Տրակտորիստներ | Այդ թվում ЧТЗ-ի համար | Տրակտորային բրիգադիրներ | Կոմբայնավարներ | Այդ թվում հյուսիսային կոմբ. համար | Վուշ գզողներ (տրակտորիստների թվից) | Վուշ վերամշակ. մեքենաների մեքենավարներ և հրահանգիչներ | Բարդ կալսիչի մեքենավարներ | Կարտոֆիլ փորող մեքենայի մեքենավարներ | ՄՏԿայանի մեխանիկներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հյուսիսային յերկրամաս | 3200 | 300 | 350 | 60 | 50 | 260 | 450 | 300 | 50 | 150 |
| Կարելիայի ԻՍՍՀ | 500 | 150 | 80 | — | — | — | — | 30 | — | 60 |
| Լենինգրադի մարզ | 6500 | 700 | 500 | 350 | 320 | 610 | 1200 | 550 | 480 | 250 |
| Արևմտյան » | 6500 | 500 | 500 | 150 | 100 | 1000 | 1200 | 700 | 430 | 220 |
| Մոսկվայի » | 9500 | 700 | 750 | 600 | 50 | 240 | 550 | 750 | 950 | 300 |
| Կալինինի » | 6000 | 700 | 600 | 100 | 70 | 1350 | 2000 | 650 | 240 | 250 |
| Իվանովյան » | 5800 | 450 | 600 | 150 | 100 | 1000 | 1200 | 500 | 350 | 200 |
| Գորկու յերկրամաս | 6000 | 550 | 700 | 250 | 50 | 250 | 250 | 500 | 400 | 200 |
| Կիրովի » | 7300 | 800 | 700 | 400 | 50 | 950 | 650 | 700 | 150 | 250 |
| Բելոռուսիայի ՍՍՀ | 6000 | 700 | 600 | 200 | 150 | 850 | 1000 | 600 | 600 | 300 |
| Կույբիշևի յերկրամասի աջ ափ | 6500 | 900 | 450 | 550 | 30 | 50 | 100 | 450 | 150 | 200 |
| Կազակի մարզի հյուսիսային շրջաններ | 3500 | 600 | 300 | 400 | — | — | — | 300 | 100 | 120 |
| Ընդամենը | 67300 | 7050 | 6130 | 3210 | 970 | 6560 | 8600 | 6030 | 3900 | 2500 |



5. 1936 թվականի համար վոչ սևահողային գոտում սահմանել նոր հողեր յուրացնելու պլանը՝ ինչպես արմատահանման, թփուտները մաքրելու և ճահիճները ցամաքեցնելու՝ 700 հազար հեկտար, ըստ մարզերի, յերկրամասերի ու հանրապետությունների՝ հետևյալ չափով.

| | | |
|---|---|---|
| Հյուսիսային յերկրամաս | 60 | հազար |
| Կարելիայի ԻՍՍՀ | 5 | » |
| Լենինգրադի մարզ | 90 | » |
| Արևմտյան » | 65 | » |
| Մոսկվայի » | 65 | » |
| Կալինինի » | 90 | » |
| Իվանովյան » | 80 | » |
| Գորկու յերկրամաս | 55 | » |
| Կիրովի » | 90 | » |
| Բելոռուսիայի ՍՍՀ | 70 | » |
| Կույբիշևի յերկրամասի աջ ափ | 30 | » |
| Ընդամենը | 700 | հազար |

Արգելել տեղական կուսակցական ու խորհրդային մարմիններին՝ արմատահանման, թփուտները մաքրելու և ճահիճները չորացնելու հաշվին նոր հողեր յուրացնելը փոխարինել մարգագետինները և արոտատեղերը վարելով, վորը գործնականում չի ավելացնում օգտագործման մեջ գտնվող ընդհանուր հողային ռեսուրսները և մի շարք դեպքերում յետ է պահում անասնաբուծության զարգացումը:

6. Բերքահավաքի շրջանում, անձրևային յեղանակի պայմաններում, հացահատիկի և վուշի հսկայական կորուստները հետագայում կանխելու նպատակով, ՍՍՀՄ-ի Ժողկոմխորհը և Համկ(բ)Կ Կենտկոմը պարտավորեցնում են բոլոր յերկրկոմներին, մարզկոմներին ու Բելոռուսիայի Կ(բ)Կ Կենտկոմին, մարզային ու յերկրային գործկոմներին և Բելոռուսիայի ՍՍՀ Ժողկոմխորհին՝ նախազգուշացնել այս տարվա բերքահավաքի կամպանիայի ընթացքում թույլ տրված սխալների կրկնությունից և կիրառել կոլտնտեսություններում հետևյալ ձեռնարկումները, վորոնք ապա-

հովում են հացահատիկի և վուշի պահպանումն անձրևային յեղանակի պայմաններում՝ բերքահավաքի, կալսման ու վերամշակման ժամանակ.

ա) մինչև բերքահավաքն սկսելը յուրաքանչյուր կոլտնտեսությունում, իսկ խոշոր կոլտնտեսություններում՝ յուրաքանչյուր բրիգադում պատրաստել ծածկված կալատեղեր, ապահովելով, վոր ՄՏ կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսություններում այդ ծածկերի տակ կարողանան տեղավորվել բարդ-կալսիչը, տրակտորը կամ շարժիչը և կալսիչին սպասարկող կոլտնտեսականները.

բ) բոլոր կոլտնտեսություններում պատրաստել կալորաններ ու խրճանոցներ, վորոնք իրենց չափով հարմարեցված պետք է լինեն յուրաքանչյուր կոլտնտեսության պահանջներին.

գ) յուրաքանչյուր կոլտնտեսությունում կառուցել կոլտնտեսային չորանոց՝ հացահատիկը չորացնելու համար, օգտագործելով տեղական վառելանյութերը (փայտ, տորֆ և այլն)։

Պարտավորեցնել մարզային ու յերկրային հողային մարմիններին և Բելոռուսիայի Հողժողկոմատին՝ սիստեմատիկ ղեկավարություն սահմանել ծածկերի, կալսարանների, խրճանոցների ու չորանոցների շինարարության նկատմամբ և անհրաժեշտ օգնություն ցույց տալ կոլտնտեսություններին՝ շինանյութերով (անտառանյութ, աղյուս), ինչպես նաև տեխնիկական կոնսուլտացիայով։

7. ԽՍՀՄ Ժողկոմխորհը և Համ Կ(բ)Կ Կենտկոմը մատնացույց են անում մարզերի ու յերկրամասերի կուսակցական և խորհրդային կազմակերպություններին, վոր նրանք ամենամոտիկ ժամանակում կկարողանան հասնել կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդմանն այն պայմանով միայն, յեթե ստալինյան կոլտնտեսային կանոնադրությունը վոչ թե ձևականորեն, այլ գործնականում յուրաքանչյուր կոլտնտեսությունում պետական հիմնական օրենքի ուժ ստանա և կանոնադրությունը խախտելու համար հանցավորները խստորեն պատժվեն։



ԽՍՀՄ Ժողկոմխորհը և Համ Կ(բ)Կ Կենտկոմն առաջարկում են բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպություններին՝ ապահովել կոլտնտեսությունից վտարելու վերաբերյալ կանոնադրությամբ սահմանված կանոնների ամենախիստ կենսագործումը, մասնավորապես թույլ չտալ, վոր կոլտնտեսությունից վտարվեն արտագնացների կամ արդյունաբերության մեջ մշտական աշխատանքի գնացածների ազգականները և ամենախիստ կերպով հետապնդել՝ վորպես իշխանությունն իչարը գործ դնողների, այն կուսակցական ու խորհրդային մարմիններին, վորոնք իրենց վորոշումներով վտարում են կոլտնտեսություններից նրա անդամներին։

ԽՍՀՄ Ժողկոմխորհը և Համ Կ(բ)Կ Կենտկոմն առաջարկում են՝ վերջ դնել կոլտնտեսությունների նախագահների և բրիգադավարների ընտրության և աշխատանքից հանելու՝ կանոնադրությամբ սահմանված կարգի բազմաթիվ խախտումներին, ապահովել կոլտնտեսականների ընդհանուր ժողովների կանոնավոր հրավիրումն ու այդ ժողովներում կոլտնտեսային տնտեսության բոլոր կարևորագույն հարցերի քննարկումը, ապահովել անգիտակից կոլտնտեսականների դաստիարակման ու կոլտնտեսային կարգապահությունը խախտող անձանց պատժելու և աշխատանքի նոր հասարակական կարգապահությունն արմատացնելու վերաբերյալ կանոնադրությամբ նախատեսված միջոցառումների ճշգրիտ պահպանումը։

ԽՍՀՄ Ժողկոմխորհը և Համ Կ(բ)Կ Կենտկոմն առաջարկում են՝ վերջ դնել մի շարք շրջաններում դեռ լայնորեն տարածված այն պրակտիկային, յերբ խորհրդային և տնտեսական կազմակերպություններն անօրինական կերպով տնօրինում են կոլտնտեսային միջոցները, և պարտավորեցնում է այդ կազմակերպություններին՝ յերկու ամսվա ընթացքում ծածկել կոլտնտեսություններին հասանելիք իրենց ամբողջ պարտքերը, իսկ դատախազության մարմիններին առաջարկել՝ ամենախիստ պատասխանատվության յենթարկել այս ցուցումը չկատարողներին։

ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը պարտավորեցնում են վերջ դնել շատ կոլտնտեսություններում դեռ հանդիպող այն պրակտիկային, յերբ քմահաճ կերպով ու անօրինականաբար տուգանքի յեն յենթարկվում կոլտնտեսականները։

8. ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմն առաջարկում են՝ գյուղատնտեսական մեքենաները բաշխելիս, կադրերի պատրաստման գործը կազմակերպելիս, վարկերով օգնելիս, առանձնապես հաշվի առնել այն շրջաններին ու կոլտնտեսություններին օգնելու անհրաժեշտությունը, վորտեղ մենատնտեսների առավել ներհոսում է տեղի ունեցել վերջին տարվա ընթացքում, ինչպես նաև նոր կազմակերպված կոլտնտեսություններին, վորպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում օգնություն ցույց տրվի այդ շրջաններին ու կոլտնտեսություններին՝ առաջավորների շարքը դուրս գալու։

9. Նկատի ունենալով, վոր հողօգտագործման խուտորային բնույթը շատ դեպքում զերոյի յե հավասարեցնում կոլտնտեսություններում հանրային տնտեսության առավելությունները և վնաս է հասցնում կոլտնտեսականների և, ընդհանուր առմամբ, կոլտնտեսությունների շահերին, նպատակահարմար գտնել այն դեպքում, յերբ կա կամ կարող է ստեղծվել կոլտնտեսային միասնական դաշտային մասսիվ, վորոշ օժանդակություն ցույց տալ այն խուտորային կոլտնտեսային տնտեսություններին, վորոնք կցանկանան բնակություն հաստատել գյուղում, արտոնություն տալով նրանց անտառանյութի հայթայթման, բանջարանոցների համար նոր հողեր վարելու գործում և վարկ բաց թողնել տնտեսություն դնելու համար։

Առաջարկել վոչ սևահողային գոտու մարզկոմներին ու յերկրկոմներին, մարզային ու յերկրային գործկոմներին, Բելոռ. ԽՍՀ Ժողկոմխորհին ու Կ(բ)Կ Կենտկոմին՝ յերկուամսվա ընթացքում՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի հաստատությանը ներկայացնել 1936 թվականին անհրաժեշտ առաջին ձեռնարկումների պլանը, ճիշտ մատնանշելով, թե վոր կոլտնտեսությունների ու շրջանների նկատմամբ են նշված այդ ձեռնարկումները։



10. Արձանագրելով, վոր չափազանց մանր կոլտնտեսությունների առկայությունը վոչ սևահողային գոտում՝ հաճախ 5—10 տնտեսությունից բաղկացած, խոչընդոտ է հանդիսանում հանրային կոլտնտեսային աշխատանքի առավելությունների օգտագործմանը, ինչպես նաև նոր մեքենաների օգտագործմանը, առաջարկել յերկրկոմներին ու մարզկոմներին և համապատասխան գործկոմներին՝ անհրաժեշտ գործնական ձեռնարկումներ մշակել այդպիսի չափազանց մանր կոլտնտեսությունները միացնելու ուղղությամբ, պայմանով, վոր միացման ժամանակ խստիվ պահպանվի կամավորության սկզբունքը, ճշգրիտ մատնանշելով շրջաններն ու կոլտնտեսությունները և յերեք ամսվա ընթացքում ներկայացնել այդ ձեռնարկումները ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ու ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի հաստատությանը։

11. Հանձնարարել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Գյուղատնտեսական բաժնին և ԽՍՀՄ Հողժողկոմատին՝ ամենակարճ ժամկետում ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հաստատությանը ներկայացնել վուշի և կարտոֆիլի բերքահավաքի նոր մեքենաների վրա աշխատողների վարձատրման կարգը, յելնելով անցյալ տարի ընդունված և կոմբայնների վրա աշխատող կոմբայնավարների վարձատրման ժամանակ իրեն լրիվին արդարացրած սիստեմից։

12. Հանձնարարել Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին, վոչ սևահողային գոտու մեքենամատակարարումն ուժեղացնելու կապակցությամբ, վառելիքի մատակարարումն սպառկոոպերացիայից հանձնել Սոյուզնեֆտատորգին, պարտավորեցնել վերջինիս՝ ավելացնել բազաների թիվը վոչ սևահողային գոտում։

Պարտավորեցնել ԽՍՀ Միության Հողժողկոմատին՝ ընդարձակել վերանորոգման բազան վոչ սևահողային գոտում և մեկ շաբաթվա ընթացքում Աշխատանքի և Պաշտ-

4092

պանության Խորհրդի հաստատությանը ներկայացնել հիմնական ու ընթացիկ վերանորոգման արհեստանոցների շինարարության պլանը՝ այդ գոտու մարզերի ու յերկրամասերի մեքենայական զինվածությունն ուժեղացնելու հաստատված պլանին համապատասխան։

13. ԽՍՀՄ Ժողկոմխորհը և Համ Կ(բ)Կ Կենտկոմը միանգամայն անթույլատրելի յեն համարում այն փաստը վոր մասնանշված յերկրամասերի ու մարզերի մեծ մասում, յերկրամասեր ու մարզեր, վորտեղ կանանց աշխատանքը հիմնական ուժ է հանդիսանում գյուղատնտեսության մեջ, միանգամայն անբավարար է դրված կանանց կոլտնտեսություններում ղեկավար աշխատանքի առաջ քաշելու և գյուղատնտեսական բարդ մեքենաների վրա կանանց աշխատել սովորեցնելու գործը։ Այդպիսի արհամարհական վերաբերմունքը կանանց առաջ քաշման նկատմամբ՝ կոլտնտեսային ակտիվի վատ դաստիարակման ու համախմբման գլխավոր պատճառներից մեկն է հանդիսանում։

ԽՍՀՄ Ժողկոմխորհը և Համ Կ(բ)Կ Կենտկոմը խընդիր են դնում վոչ սևահողային գոտու յերկրկոմների ու մարզկոմների, յերկրային ու մարզային գործկոմների առաջ, Բելոռ. ԽՍՀ Ժողկոմխորհի և Կ(բ)Կ Կենտկոմի առաջ—մոտակա մեկ-յերկու տարվա ընթացքում հասնել այն բանին, վոր կոլտնտեսությունների նախագահների, կոլտնտեսային բրիգադիրների, տրակտորիստների, կոմբայնավարների և վուշի ու կարտոֆիլի տրակտորային մեքենաների վրա աշխատողների, կոլտնտեսային հաշվետարների ու կոլտնտեսային-ապրանքային ֆերմաների վարիչների զգալի մասը լինեն կին-կոլտնտեսուհիներ։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի Նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ.

Համ. Կ.(բ)Կ. Կենտրոնական Կոմիտեյի
Քարտուղար՝ Ի. ՍՏԱԼԻՆ

19 դեկտեմբերի 1935 թ.



Гос. Публ. Библиотека ՀԽՍՀ-ССР
ՀՀ Ազգային գրադարան
NL0209797

29.809

**Об организационно-хозяйственном укреплении колхозов и под'еме сельского хозяйства в областях, краях и республиках нечерноземной полосы**

Постановление Совета Народных Комиссаров Союза ССР и Центрального Комитета ВКП(б).

СЕЛЬХОЗГИЗ—ЭРИВАНЬ 1936